Օրենսդրական փոփոխություններ

Նոր կարգավորումներ թվային դրոշմավորման համակարգում

www.src.am

Թվային դրոշմավորման ավելի արդյունավետ համակարգ

Նույնականացման միջոցներով պարտադիր դրոշմավորման համակարգում կատարվել են օրենսդրական փոփոխություններ, որոնք միտված են դրոշմավորման համակարգի արդյունավետ գործարկմանը, այդ թվում՝ ապրանքաշրջանառության բոլոր փուլերում գործընթացների պատշաճ կազմակերպմանը, հարկային հսկողության մեխանիզմների կատարելագործմանը և հարկային իրավախախտումների հայտնաբերման արդյունավետության բարձրացմանը:

Տվյալների փոխանցման իրավական հիմք

Օրենքի փոփոխությամբ ստեղծվել է իրավական հիմք, որը թույլ կտա Կառավարությանը սահմանել այն դեպքերը, երբ ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տվյալները պետք է հարկային մարմին փոխանցվեն էլեկտրոնային եղանակով՝ հավելվածի միջոցով: Այն թույլ կտա ճկուն և արդյունավետ վերահսկողություն իրականացնել նույնիսկ այն դեպքերում, երբ ապրանքները վաճառվում են ոչ թե ամբողջությամբ, այլ՝ մաս-մաս, օրինակ հանրային սննդի և հյուրանոցային ծառայությունների ոլորտներում, որտեղ ապրանքներն օգտագործվում են ոչ թե առանձին վաճառքի, այլ ծառայությունների մատուցման ընթացքում:

Պատասխանատվության միջոցների մեղմացում

Սահմանվել է տուգանքների նոր համակարգ, որով վերանայվում և մեղմվում են պատասխանատվության միջոցները: Գործող կարգավորմամբ ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ հարկային մարմին տեղեկատվություն չտրամադրելը կամ փաստացի տվյալներից տարբերվող տեղեկատվություն տրամադրելը, համարվում է ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում, հետևաբար, տուգանքը ևս համարժեք է ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտման տուգանքին: Նոր փոփոխությամբ՝ այսուհետ յուրաքանչյուր խախտման դեպքում սահմանվել է 30 000 դրամ տուգանք: Տուգանքների հանրագումարը մեկ ստուգման ակտով չի կարող գերազանցել՝ առաջին խախտման դեպքում 300 000 դրամը, մեկ տարվա ընթացքում խախտման առաջին կրկնման դեպքում՝ 3 մլն դրամը, իսկ երկրորդ և հետագա կրկնությունների դեպքում՝ 10 մլն դրամը:

ՀԴՄ կտրոնում կարտացոլվեն նաև ապրանքի նույնականացման միջոցի տվյալները

ՀԴՄ կիրառող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքներ վաճառելիս, պարտավոր են այդ նշանները սկանավորել և տվյալները ՀԴՄ-ի կամ դրան միացված համակարգերի միջոցով փոխանցել հարկային մարմնի միասնական շտեմարան: Ընդ որում, սահմանվել է, որ այդ նույնականացման միջոցների տվյալները պետք է արտացոլվեն նաև ՀԴՄ կտրոնի վրա, որպեսզի հնարավոր լինի հեշտությամբ հետևել և վերահսկել ապրանքների վաճառքը: Այս պահանջը թույլ կտա հարկային ստուգման ժամանակ տեղում պարզել՝ արդյոք տվյալ ապրանքի նույնականացման միջոցը շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկատվությունը պատշաճ կերպով ներկայացվել է հարկային մարմին: